ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի 2009թ. ապրիլի 10-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 26-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ.Դավթյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը /կցվում է/: Միաձայն հաստատելուց հետո, խորհուրդն անցավ օրակարգի հարցերի քննարկմանը:

1. ՀՈԲԵԼՅԱՆ. Խորհրդի նախագահը իր և խորհրդի անդամների անունից շնորհավորեց դոցենտ Ռ.Հ. Եղյանին 75-ամյակի կապակցությամբ:

2. ՄՐՑՈՒՅԹ.

1.1. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի միջնորդությունը քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու Ա.Սիրունյանին՝ դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի նախագահ դոցենտ Ս.Դիլբանդյանը ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ Ա.Սիրունյանի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ համապատասխան ամբիոնի միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ.Բարսեղյանը, Ս.Մեղրյանը, Ա.Գաբուզյանը, Գ.Ղազինյանը:

Խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն բավարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու Ա.Սիրունյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

3. Գիտական հաղորդում (զեկ.՝ ի.գ.դ. Ա.Գաբուզյան, դոց. Ա.Հարությունյան):

3.1. ԼՍԵՑԻՆ. Ա.Գաբուզյանը և Ա.Հարությունյանը ներկայացրեցին ԱՄՆ կատարած իրենց ճանաչողական այցի մասին՝ իրավաբանական բուհերում դասավանդման մեթոդիկայի և իրավաբանական կլինիկաների գործունեության մասին (հաղորդումը կցվում է):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Գ.Պետրոսյանը, Գ.Ղարախանյանը, Ա.Վաղարշյանը, Տ.Բարսեղյանը, Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. ի.գ.դ. Ա.Գաբուզյանի և Ա.Հարությունյանի ներկայացրած գիտական հաղորդումն ընդունել ի գիտություն:

4. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկուցող՝ ամբիոնի վարիչ Տ.Բարսեղյան):

Հաշվետվությունը կցվում է:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն.Այվազյանը, Ա.Գաբուզյանը, Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, իսկ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում կատարված աշխատանքը գնահատել դրական:

5. ԼՍԵՑԻՆ. 2008-09 ուսումնական տարվա մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանության նախապատրաստման վիճակի վերաբերյալ հաղորդում (զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ամբիոնների վարիչները հայտնեցին, որ մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանության նախապատրաստման աշխատանքները նորմալ ընթացքի մեջ են, գիտական ղեկավարների դրական կարծիքներով դրանք ներկայացվել են ամբիոններ և այժմ գտնվում են գրախոսման փուլում:

Ըստ համապատասխան ամբիոնների վարիչների՝ երկու աշխատանք քաղաքացիական դատավարության ամբիոնից, մեկ աշխատանք եվրոպական և միջազգային իրավունքի, և մեկ աշխատանք պետության և իրավունքի տեսության ու պատմության իրավունքի ամբիոններից դեռևս չեն ներկայացվել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ.Բարսեղյանը, Ն.Այվազյանը, Ա. Խաղարշյանը, Գ. Ղազինյանը :

ՈՐՈՇԵՑԻՆ. 2008-09 ուսումնական տարվա մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանության նախապատրաստման վիճակի վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն և հանձնարարել քաղաքացիական դատարավորության, եվրոպական և միջազգային իրավունքի, պետության և իրավունքի տեսության ու պատմության իրավունքի ամբիոնների վարիչներին աշխատանքներիր հետագա ընթացքի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ:

6.1. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ Գ.Բեքմեզյանի «Արտապայմանագրային պարտավորություններ» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ.Բարսեղյանը, Ս.Մեղրյանը, Ն.Այվազյանը, Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ գիտական մակարդակով և ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն, Գ.Բեքմեզյանի «Արտապայմանագրային պարտավորություններ» վերտառությամբ մենագրությունը երաշխավորել տպագրության:

6.2. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ Տ.Դավթյանի «Ծնողների և զավակների հարաբերությունների իրավական կարգավորումը» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ.Բարսեղյանը, Գ.Ղարախանյանը, Ս.Մեղրյանը, Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ գիտական մակարդակով և ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն, Տ.Դավթյանի «Ծնողների և զավակների հարաբերությունների իրավական կարգավորումը» վերտառությամբ մենագրությունը երաշխավորել տպագրության:

6.3. **ԼՍԵՑԻՆ.** «ԵՊՀ լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխության թեկնածուների երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Հ.Խաչիկյանը, Ա.Վաղարշյանը, Վ.Քոչարյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնառության ընթացքում ցուցաբերած գերազանց առաջադիմությունը, գիտական աշխատանքներ կատարելու ունակությունը, ուսանողական հասարակական ակտիվությունը և օրինակելի վարքը՝ «ԵՊՀ լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխության թեկնածու երաշխավորել հետևյալ ուսանողներին.

1. Տարոն Սիմոնյան (մագիստրատուրա, 2-րդ կուրս):
2. Տաթևիկ Գրիգորյան (բակալավրիատ, 4-րդ կուրս):
3. Հայարփի Զարգարյան (բակալավրիատ, 4-րդ կուրս):

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Գ.ՂԱԶԻՆՅԱՆ**

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Տ.ԴԱՎԹՅԱՆ**

ՔԱՂՎԱԾՔ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի
2009թ. ապրիլի 10-ի նիստի թիվ 7 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի միջնորդությունը քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու Ա.Սիրունյանին՝ դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի նախագահ դոցենտ Ս.Դիլբանդյանը ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ Ա.Սիրունյանի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ համապատասխան ամբիոնի միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ.Բարսեղյանը, Ս.Մեղրյանը, Ա.Գաբուզյանը, Գ.Ղազինյանը:

Խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն բավարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու Ա.Սիրունյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

Խորհրդի նախագահ *Գ. Ղազինյան*
Խորհրդի քարտուղար *Տ. Դավթյան*

Իսկականի հետ ճիշտ է
Խորհրդի քարտուղար *Տ. Դավթյան*

ՔԱՂՎԱԾՔ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի
2009թ. ապրիլի 10-ի նիստի թիվ 7 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ Գ.Բեքմեզյանի «Արտապայմանագրային պարտավորություններ» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ.Բարսեղյանը, Ս.Մեղրյանը, Ն.Այվազյանը, Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ գիտական մակարդակով և ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն, Գ.Բեքմեզյանի «Արտապայմանագրային պարտավորություններ» վերտառությամբ մենագրությունը երաշխավորել տպագրության:

Խորհրդի նախագահ *Գ. Ղազինյան*
Խորհրդի քարտուղար *Տ. Դավթյան*

Իսկականի հետ ճիշտ է
Խորհրդի քարտուղար *Տ.Դավթյան*

ՔԱՂՎԱԾՔ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի
2009թ. ապրիլի 10-ի նիստի թիվ 7 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ Տ.Դավթյանի «Ծնողների և զավակների հարաբերությունների իրավական կարգավորումը» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ.Բարսեղյանը, Գ.Ղարախանյանը, Ս.Մեղրյանը, Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ գիտական մակարդակով և ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն, Տ.Դավթյանի «Ծնողների և զավակների հարաբերությունների իրավական կարգավորումը» վերտառությամբ մենագրությունը երաշխավորել տպագրության:

Խորհրդի նախագահ *Գ. Ղազինյան*
Խորհրդի քարտուղար *Տ. Դավթյան*

Իսկականի հետ ճիշտ է
Խորհրդի քարտուղար *Տ. Դավթյան*

ՔԱՂՎԱԾՔ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի

2009թ. ապրիլի 10-ի նիստի թիվ 7 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ. «ԵՊՀ լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխության թեկնածուների երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Հ.Խաչիկյանը, Ա.Վաղարշյանը, Վ.Քոչարյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնառության ընթացքում ցուցաբերած գերազանց առաջադիմությունը, գիտական աշխատանքներ կատարելու ունակությունը, ուսանողական հասարակական ակտիվությունը և օրինակելի վարքը՝ «ԵՊՀ լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխության թեկնածու երաշխավորել Տարոն Սիմոնյանին (մագիստրատուրա, 2-րդ կուրս):

Խորհրդի նախագահ *Գ. Ղազինյան*

Խորհրդի քարտուղար *Տ. Դավթյան*

Իսկականի հետ ճիշտ է

Խորհրդի քարտուղար *Տ. Դավթյան*

ՔԱՂՎԱԾՔ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի

2009թ. ապրիլի 10-ի նիստի թիվ 7 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ. «ԵՊՀ լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխության թեկնածուների երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Գ.Ղարախանյանը, Ն,Այվազյանը, Հ.Խաչիկյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով ուսման գերազանց առաջադիմությունը, գիտական, հասարակական ակտիվությունը և կարգապահությունը՝ «ԵՊՀ լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխության թեկնածու երաշխավորել Տաթևիկ Գրիգորյանին (բակալավրիատ, 4-րդ կուրս):

Խորհրդի նախագահ *Գ. Ղազինյան*

Խորհրդի քարտուղար *Տ. Դավթյան*

Իսկականի հետ ճիշտ է

Խորհրդի քարտուղար *Տ. Դավթյան*

ՔԱՂՎԱԾՔ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի

2009թ. ապրիլի 10-ի նիստի թիվ 7 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ. «ԵՊՀ լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխությանը մասնակցելու համար թեկնածուների երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Գ.Ղարախանյանը, Ն,Այվազյանը, Հ.Խաչիկյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնառության ընթացքում ցուցաբերած գերազանց առաջադիմությունը, ուսանողական հասարակական ակտիվությունը և օրինակելի վարքը՝ «ԵՊՀ լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխության թեկնածու երաշխավորել Հայարփի Զարգարյանին (բակալավրիատ, 4-րդ կուրս):

Խորհրդի նախագահ *Գ. Ղազինյան*

Խորհրդի քարտուղար *Տ. Դավթյան*

Իսկականի հետ ճիշտ է

Խորհրդի քարտուղար *Տ. Դավթյան*